«Վալլետտա» ՍՊԸ -ի թիվ ՍԴ2/0034/04/16 սնանկության գործով գույքի բաց դասական եղանակով աճուրդի կազմակերպման և անցկացման մասին հայտարարություն

2026թ. մայիսի 5-ին, ժամը՝ 15:15-ին ք. Երևան, Արշակունյաց պող., 5 շենք, 109 սենյակ հասցեում, պարտապան «Վալլետտա» ՍՊԸ -ի թիվ ՍԴ2/0034/04/16 սնանկության գործով կառավարիչ (աճուրդի կազմակերպիչ) Վարազդատ Ասատանի կողմից կանցկացվի հերթական աճուրդ՝ հետևյալ լոտերով՝

Լոտ 1:

1. Գազ ֆրիոն HARP 502 13.2 կգ, 1բալոն, թողարկման տարեթիվ՝ 2010,
2. Մագնիտոֆոն JVC RC-W305,1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010
3. Ջրատաքացուցիչ էլեկտրական ARISTON 50 լիտր տարողության, 6 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
4. Ջրատաքացուցիչ էլեկտրական ARISTON 15 լիտր տարողության, 7 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
5. Ջրատաքացուցիչ էլեկտրական ARISTON sg100 լիտր տարողության, 81 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
6. Ջրատաքացուցիչ էլեկտրական ARISTON sg100 լիտր տարողության, 2 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
7. Ջրատաքացուցիչ էլեկտրական ARISTON 200 լիտր տարողության, 1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
8. Ֆեն HD-2501 1800W Binatone,1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
9. Թեյնիկ էլեկտրական kenwood 1.7լ., 1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
10. Թեյնիկ էլեկտրական delonghi 2.0լ., 1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
11. Թեյնիկ էլեկտրական Moulinex 2.0լ., 1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010
12. Օդաքաշ պահարանի ֆիլտր UNIT-ACk 50, 230 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
13. Օդաքաշ պահարան ARDO 2KM2BS, 5 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
14. Օդաքաշ պահարանի ֆիլտր CARBO ACKA0004, 137 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010
15. Լվացքի մեքենա ARDO FLS105L, 2 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
16. Լվացքի մեքենա ARDO TL810E, 1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
17. Լվացքի մեքենա ARDO TL60E, 1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
18. Փչովի ներկ ABRO, 33 տուփ, թողարկման տարեթիվ՝ 2010,
19. Փչովի ներկ AGRO, 154 տուփ, թողարկման տարեթիվ՝ 2010,
20. Փորձարկման ստենդ կաթս համար VERNELLI SRL BPF2CSM, 1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010
21. Ինտերֆեյսի Պլատա ARISTON Bus 3318229, 4 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
22. Կլիմա մենեջեր ARISTON 3318319, 2 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
23. Ինտերֆեյսի Պլատա ARISTON Clip-in 3318242, 2 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
24. Վնեշնի սենսոր ARISTON 3318232, 4 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010
25. Ալյումինե ռադիատորի նիկելի ներդիր A10/1, 5.000 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
26. Ալյումինե ռադիատորի խցանի ներդիր A11/1, 4.000 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
27. Ջրատաքացուցիչ գազային ARISTON GIWH 13 E A լիտր, 5 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
28. Ջրատաքացուցիչ գազային ARISTON UNO MFFI EE , 15 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
29. Ջրատաքացուցիչ գազային ARISTON 80 լիտր, 1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,

30. Գազօջախ ARDO A5540G6 W, 1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
31. Գազօջախ ARDO KA531EBX, 1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
32. Օդակարգավորիչ ARISTON MW18HO, 1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
33. Օդակարգավորիչի պահեստամասեր, շարժիչ 574216, 1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
34. Օդակարգավորիչի պահեստամասեր, շարժիչ 996467, 1 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010
35. Օդակարգավորիչի պահեստամասեր, շարժիչ 991959, 3 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
36. Օդակարգավորիչի պահեստամասեր էլեկտրական սխեմա 574226, 2 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010
37. Օդակարգավորիչի պահեստամասեր էլեկտրական սխեմա 65100709, 2 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
38. Օդակարգավորիչի պահեստամասեր ռեդուկտոր 572100, 11 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
39. Թեյի պոլիէթիլենային տոպրակներ, 2.844, 500 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
40. Թեյի համար արկղեր գունավոր տպագրված, 22.50, 400 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
41. Թեյի ստվարաթղթե արկղ՝ 14, 10 հատ, թողարկման տարեթիվ՝ 2010,
42. Փաթեթավորման թաղանթ, 2.389.970 կգ, թողարկման տարեթիվ՝ 2010,
43. Թեյ կանաչ "Շերի" տուփով, 13.900 տուփ, թողարկման տարեթիվ՝ 2012,
44. Թեյ կանաչ "Ջենիքս" տուփով, 13.500 տուփ, թողարկման տարեթիվ՝ 2012:

Լոտ 1-ի գույքի մեկնարկային գինը կազմում է 350.308 (երեք հարյուր հիսուն հազար երեք հարյուր ութ) ՀՀ դրամ:

Լոտ 2: «MERSEDES-BENZ E500» մակնիշի մարդատար ավտոմեքենա:
Բնութագիր - թողարկման տարեթիվ՝ **2003**թ., նույնականացման համարը՝ **WDB21110701A118077**, հաշվառման համարանիշ՝ **855 LL 11**, տեսակը՝ **թեթև մարդատար**, թափքի տեսակը՝ **սեդան**, գույնը՝ **մոխրագույն արծաթագույն մետալիկ**, վիճակը՝ **24.02.2013թ. ենթարկվել է վթարի, չաշխատող, սեփականտիրոջ կողմից վերանորոգումը համարվել է տնտեսապես ոչ նպատակահարմար, մեքենան մասնատվել է: Համաձայն 11.02.2015թ. թիվ 1069485 տեղեկանքի՝ տրանսպորտային միջոցը հաշվառումից ժամանակավոր հանված է:** Գրանցված իրավունք՝ սեփականություն («Վալլետտա» ՍՊԸ):
Լոտ 2-ի գույքի մեկնարկային գինը կազմում 167.772 **/մեկ հարյուր վաթսունյոթ հազար յոթ հարյուր յոթանասուն երկու/ ՀՀ դրամ:**

Լոտ 3: **«КАМАЗ-53212 (контейнер)»** մակնիշի ավտոմեքենա:

Բնութագիր - թողարկման տարեթիվ՝ **1992**թ., թափքի համարը՝ **1458745 Б/Б**, գրանցման համարանիշը՝ **948 UL 51**, տեսակը՝ բեռնատար, թափքի տեսակը՝ **կոնտեյներ**, վիճակը՝ **շահագործման ենթակա չէ, ամբողջությամբ քանդված, մասնատված է, ընթացային և մի շարք այլ մասեր բացակայում են:** Գրանցված իրավունք՝ սեփականություն («Վալլետտա» ՍՊԸ):
Լոտ 3-ի գույքի մեկնարկային գինը կազմում է **144.195 /մեկ հարյուր քառասունչորս հազար մեկ հարյուր իննսունհինգ/ ՀՀ դրամ:**

Լոտ 4: **«ЕрАЗ -762Б»** մակնիշի ավտոմեքենա:
Բնութագիր - թողարկման տարեթիվ՝ **1990**թ., թափքի համարը՝ **204190**, գրանցման համարանիշը՝ **203 SU 51**, տեսակը՝ **բեռնամարդատար**, թափքի տեսակը՝ **ֆուրգոն**, վիճակը՝ **շահագործման ենթակա չէ, ամբողջությամբ քանդված, մասնատված է և մի շարք ընթացային մասեր բացակայում**

են: Գրանցված իրավունք՝ սեփականություն («Վալլետտա» ՍՊԸ):
Լոտ 4-ի գույքի մեկնարկային գինը կազմում է **12.582 /տասներկու հազար հինգ հարյուր ութսուներկու/ ՀՀ դրամ:**

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև հայտի ներկայացման վերջնաժամկետը՝ ***27.04.2026թ.***, ժամը՝ ***18:00***-ն, կարող են հայտ ներկայացնել սնանկության դատարան՝ ***ք. Երևան, Օտյան 53/2*** հասցեով:

Հայտում պետք է նշվեն.
- Հայտատու իրավաբանական անձի անվանումը, ծանուցման հասցեն, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեն, իրավաբանական անձի ներկայացուցչի (նրա անունից հանդես եկող անձի) անունը, ազգանունը, կոնտակտային տվյալները,
- հայտատու ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային տվյալները, ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ ներկայացուցչի անունը, ազգանունը, ծանուցման հասցեն, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային տվյալները,
- պարտապանի անվանումը (ֆիզիկական անձի դեպքում՝ անունը, ազգանունը),
- աճուրդի անցկացման օրը, ամիսը, տարեթիվը,
- կառավարչի անունը, ազգանունը,
- հայտին կցվող փաստաթղթերի ցանկը:

Հայտատուն հայտում պետք է նշում կատարի նաև այն մասին, որ տեղեկացված է, որ ծանուցումները և փաստաթղթերը ուղարկվելու են հայտում նշված էլեկտրոնային փոստի հասցեին և որ դա համարվում է պատշաճ ծանուցում (հանձնում):
Հայտատուն կրում է իր կողմից տրամադրված էլեկտրոնային հաղորդակցության միջոցներին ուղարկված ծանուցումները չկարդալու անբարենպաստ հետևանքները: Հայտը ստորագրվում է հայտատուի (նրա անունից հանդես եկող անձի, ներկայացուցչի) կողմից:

Հայտին կից ներկայացվում են՝
- լոտի մեկնարկային գնի 5 տոկոսի չափով նախավճարի և լոտի մեկնարկային գնի 1 տոկոսի (բայց ոչ ավել, քան նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի) չափով աճուրդի մասնակցության վճարի վճարումը Պարտապանի սնանկության հատուկ հաշվին (հ/հ՝ 1930030206443800, բանկ՝ «Կոնվերս Բանկ» ՓԲԸ-ը, *որպես ստացող նշել պարտապանին «Վալլետտա» ՍՊԸ* կատարված լինելու փաստը հաստատող անդորրագիրը,
- հայտատուի՝ լիազորված անձի միջոցով հանդես գալու դեպքում լիազորագիրը
- իրավաբանական անձ հայտատուների դեպքում՝ նաև պետական գրանցումը հավաստող փաստաթղթի և կանոնադրության, ինչպես նաև իրավաբանական անձի ներկայացուցչի անձը հաստատող փաստաթղթի պատճենները,
- անհատ ձեռնարկատեր հայտատուների դեպքում՝ նաև պետական հաշվառումը հավաստող փաստաթղթի և անձը հաստատող փաստաթղթի պատճենները,
- անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձ հայտատուների դեպքում՝ նաև անձը հաստատող փաստաթղթի պատճենը:

Աճուրդին կարող են ներկա գտնվել նաև աճուրդի մասնակից չհամարվող անձինք, ներառյալ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի (այսուհետ՝ նախարար) գրավոր հանձնարարությամբ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչները (այսուհետ՝ աճուրդի մասնակից չհամարվող անձ):
Աճուրդի մասնակից չհամարվող անձը աճուրդին ներկա գտնվելու համար կառավարչին է ներկայացնում իր անձը հաստատող փաստաթուղթը, իսկ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության ներկայացուցիչը՝ աճուրդին ներկա գտնվելու վերաբերյալ հանձնարարականի բնօրինակը և իր անձը հաստատող փաստաթուղթը:

Կառավարիչն իրավասու է սույն կետում նշված փաստաթղթերը չներկայացրած անձին չթույլատրել ներկա գտնվել աճուրդին:
Հայտի ներկայացմանն առնչվող հարցերը, աճուրդի անցկացման և աճուրդի արդյունքներով պայմանավորված հարաբերությունները կանոնակարգվում են ՀՀ արդարադատության նախարարի 16.03.2020թ. թիվ 116-Ն հրամանով հաստատված կարգով, որը համարվում է աճուրդի կանոնակարգ:
Հայտի ձևը, աճուրդի կանոնակարգը, հաղթողի կողմից ստորագրման ենթակա՝ աճուրդի արդյունքների մասին արձանագրությունը կարող եք ստանալ նախորոք դիմելով սնանկության գործով կառավարչին կամ աճուրդի օրը՝ աճուրդի կազմակերպչից (սնանկության գործով կառավարչից)՝ աճուրդն սկսվելուց առաջ՝ աճուրդի անցկացման վայրում:
Եթե լոտերի թիվը մեկից ավելի է, ապա դրանց աճուրդները կազմակերպվում են շարադրված հերթականությամբ: Լոտի աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Աճուրդի հաղթողի կողմից վճարված նախավճարը համարվում է վաճառքի գնի մաս և աճուրդի հաղթողը (այդ թվում՝ հարկային գործակալը) լոտի վաճառքի գինը ամբողջությամբ (այսինքն՝ վաճառքի գնի և վճարված նախավճարի տարբերությունը) պարտավոր է վճարել աճուրդի օրվանից հետո՝ տասնօրյա ժամկետում:
Եթե լոտը իրավաբանական անձի սեփականություն է, ապա լոտի վաճառքի գինը ներառում են նաև հարկերը, իսկ եթե ֆիզիկական անձի սեփականություն է, ապա լոտի վաճառքի գնի մեջ չեն ներառվում հարկային գործակալների կողմից վճարման ենթակա հարկերը:
Աճուրդին մասնակցելու, առուվաճառքի պայմանագրի կնքման, անհրաժեշտության դեպքում՝ դրանից ծագող իրավունքների պետական գրանցման և/կամ գնված գույքն ուրիշի տիրապետումից հետ պահանջելու և/կամ գույքը գնորդի փաստացի տիրապետմանն անցնելու հետ կապված գործողություններն ու դրանց առնչվող բոլոր ծախսերը, առուվաճառքի պայմանագրի կնքման համար անհրաժեշտ և առուվաճառքի պայմանագրից բխող բոլոր այլ (ցանկացած տեսակի) ծախսերը կատարվում են աճուրդի հաղթողի կողմից:
Լոտը կարելի է ուսումնասիրել սույն հայտարարության հրապարակման օրվան հաջորդող 10 (տասը) օրերի ընթացքում, աշխատանքային օրերին և ժամերին՝ նախապես պայմանավորվելով կառավարչի հետ: Կառավարչի հետ պայմանավորվելու, լոտերի մասին տեղեկություններ ստանալու և աճուրդին առնչվող ցանկացած այլ հարցով կարող եք փոստով կամ էլեկտրոնային փոստով (varazdatasatryan@mail.ru) նամակ գրել սնանկության գործով կառավարչին (հեռ +37494187008 նաև WhatsApp և VIBER):